

631-86

S-48

1927



075 2013 AUG 2013

260

Չ Գ Ր Ս Մ Ր Ք

Напечатано в типо. Госиздата  
„Красный Пролетарий.“  
Москва, Пименовск ул.,  
д. № 16, в количе-  
стве 3000 экз.  
Главлит  
№ 82423.



### 1. ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Ե ՊԱՐԱՐՏԱՅՆՆԵԼ ՀՈՂԸ.

Բողորը գիտեն, վոր ամեն մի սերմ հողի մեջ ծլում է, աճում, ծաղկում ու պտուղ աալիս: Գիտեն նաև այն, վոր ամեն մի բույս ունի արմատներ, ցողուններ և տերևներ: Արմատները հողի մեջ մեծանում ու հյուղավորվում են և ջրի միջոցով հողից ծծում դանազան նյութեր: Հողից վերցրած այդ նյութերից ել գոյանում է բույսի մարմինը, վորը կամաց կամաց աճում, մեծանում, ծաղկում ու պտուղներ է տալիս:

Յեթե մենք բույսը վառենք, ապա կտեսնենք, վոր նրա այրվելուց հետո տակը մոխիր է մնում: Այդ մոխիրը հենց այն նյութերն են, վոր բույսն արմատների միջոցով վերցրել է հողից: Ուրեմն, հողի մեջ կան այնպիսի նյութեր, վորոնցով կերակրվում են բույսերը, կամ ինչպես ասում են, վորոնք սնունդ են տալիս բույսերին:

Յերբ ամեն տարի մենք հողի մեջ ցանք ենք անում, դրանով տարեց տարի հողից վերցնում ենք այդ նյութերը և հողն աղքատանում է, նրա մեջ յեղած սննդատու նյութերը պակասում են: Յեթե այդպես յերկար տարիներ շարունակենք, կտեսնենք, վոր քանի գնում ստացված բերքը պակասում է, և վերջիվերջո հողն այնքան

ուժասպառ և լինում, վոր այլևս բերք չի տալիս:

Ինչն և դրա պատճառը:

Հողը նման է մի շտեմարանի: Բայց յեթե շտեմարանից շարունակ վերցնես և տեղը նորից չդնես, մի որ ել շտեմարանը կդատարկվի և ել վերցնելու բան չես ունենար:

Հողից ի՞նչ ենք վերցնում մենք:

Հողից մենք վերցնում ենք՝ ցորեն, գարի, հաճար, զանազան պտուղներ, հողից խոտ ու դարման ենք ստանում և այդ բոլորը տանում ու լցնում ենք մեր շտեմարանները:

Այդպես, տարեց տարի հողի հարստութունը կորոպտում ենք, բայց նրան վոչինչ չենք տալիս:

Բայց չե վոր այդ ցորենի ու գարու, դարմանի ու խոտի մեջ և հավաքվում հողի ամբողջ հարստութունը, նրա մեջ յեղած սննդատու նյութերը:

Անասունների տված դարմանի ու խոտի և ուրիշ կերերի մի մասը սնունդ է տալիս, միս, վոսկոր և արյուն է դառնում, իսկ մյուս մասը նորից դուրս է գալիս և կազմում է անասունների արտաթորութունները (կու, փեյին):

Այդ արտաթորութունները ամբողջապես կազմված են նորից այն նյութերից, վորոնցով սնունդ են առել բույսերը, վորոնցից գոյացել և դարմանը, խոտը, հացահատիկներն և այլն: Յեթե մենք գոյացած այդ արտաթորութունները, կամ ինչպես ասում են՝ գոմաղբը նորից հողին տանք, պրանով մենք հողի կորցրած ուժը վերականգնած կլինենք, այսինքն՝ հողի շտեմարանից վերցրածը նորից տեղը դրած կլինենք:

Այդ և պատճառը, վոր այն հողերը, վորոնք գոմաղ-

բով պարարտացվել են, կամ վորտեղ վոչխարները մի քանի անգամ գիշերել են՝ սկսում են շատ լավ բերք տալ:

Հողին շատ բան չի հարկավոր: Սմեն մի քառակուսի սաժեն տեղին հարկավոր է տալ մի փուլ գոմաղբ, կամ յեթե դեսյատինով ասենք, մի դեսյատին հողին հարկավոր կլինի տալ 120—130 սայլ գոմաղբ:

Մեկ դեսյատին հողում այդքան գոմաղբ լցնելով, մենք կարող ենք 3—4 տարի անընդհատ լավ բերք ստանալ:

Բայց արի ու տես, վոր գոմաղբը մեկանում շատ թանձ նյութ է վոչ միայն նրա համար, վոր լավ է պարարտացնում հողը, այլև այն պատճառով, վոր մեկանում անտառներ շատ քիչ կան, իսկ շրջաններ ու գավառներ կան, վոր բոլորովին անտառներ չունեն: Դրա համար ել մեր գյուղացիները գոմաղբից աթար են պատրաստում և վորպես վառելիք գործածում:

Տեսնենք, յեթե գոմաղբը դաշտ տանեն ու հողերը պարարտացնեն, արդյոք մարդիկ վառելիքի նեղութուն կկրե՞ն, թե վոչ:

Վերցնենք հենց ցորենի ցանքսը:

Մեր յերկրում, համարյայա ամեն տեղ գյուղացին մեկ դեսյատին ցորենի արտից ամենաշատը ստանում է 40—50 փուլ ցորեն: Շատ քիչ է պատահում, վոր բերքը դրանից ավելի լինի, այն ել, կամ շատ լավ հող պիտի լինի, կամ յերկար ժամանակ լսամ թողած, կամ թե՛ ջրովի հող: Յեկ յեթե մեր գյուղացիք մեկ դեսյատինից 60 փուլ ցորեն են ստանում— համարում են շատ լավ բերք:

Մինչդեռ արտասահմանում, ինչպես որինակ Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և մինչև իսկ փոք-

ըիկ և մեր յերկրի նման լեռնոտ Շվեյցարիայում, մեկ դեոյատինից ստանում են ամենապակասը 150—160 փ. ցորեն: Ռուսաստանի շատ վայրերում ել այժմ 100—150 փուլթ ցորեն ստանալը սովորական յերևույթ է և դրա պատճառը վոչ թե այն է, վոր նրանց հողերը մերինից լավ են, այլ այն, վոր նրանք հողը մեզ նման չեն կողոպտում, այլ 2—3 տարին մի անգամ պարարտացնում են գոմաղբով: Յեվ յեթե մենք կարողանանք մեր հողերից 40—50 փուլթ ցորենի փոխարեն 100—120 փուլթ ստանալ (եւ չենք ասում արտասահմանի չափ), ով կարող է ասել, թե մենք վառելիք չենք ունենա:

Պարզ հաշիվ է:

Յեթե մեր գյուղացին իր մեկ դեոյատինից 50 փթի փոխարեն հարյուր փուլթ ցորեն ստանա, ուրեմն նա իր շտեմարանում 50 փուլթ ավելի ցորեն կունենա: Յեթե այդ ավելցուկ 50 փթից 20 փուլթը ծախի, այդ փողով այնքան փայտ կառնի, վոր ամբողջ տարին լիուլի կվառի և իր շտեմարանումն էլ սովորականից 30 փուլթ ավելի ցորեն կունենա:

Այս հասարակ հաշիվն արտասահմանի գյուղացիները շատ լավ են հասկացել և վաղուց են հասկացել: Դրա համար ել գոմաղբից նրանք ամենևին աթար չեն պատրաստում և աթարի գարշահոտության ու ծխի մեջ չեն խեղդվում, այլ գոմաղբն ամբողջպես գործ են ածում վորպես պարարտանյութ և իրենց դաշտերից մեծ ոգուտներ են ստանում:

Ահա քե ինչու պես է պարարտացնել մեր դաշտեր:

## 2. Ի՞նչ ՍՆՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ Ի ՈՒ Յ Ս Ե Ր Ը.

Բույսերը հաջողութամբ ծլելու ու զարգանալու համար ամենից առաջ կարիք ունեն ջերմության, լույսի և ջրի: Բացի դրանից, նրանք կարիք ունեն և մի քանի ուրիշ նյութերի, վորոնց մի մասը ստանում են ողից՝ տերևների ու ճյուղերի միջոցով, իսկ մյուս մասը հողից՝ արմատների միջոցով:

Այն ամենը, ինչ վոր բույսերը ստանում են հողից և ողից՝ արմատների և տերևների միջոցով՝ կոչվում են բույսերի սննդարար նյութեր:

Հողից և ողից ստացված այդ սննդարար նյութերից բույսերը լույսի, ջերմության և ջրի ոգնութամբ պատրաստում են իրենց մարմինն՝ այսինքն՝ ցողունը, ճյուղերը, տերևները, արմատները, ծաղիկներն ու պտուղները:

Ջերմությունը և լույսը, ինչպես հայտնի յե, ստացվում է արեգակի շնորհիվ և մենք, վոչ մի հնարավորություն չունենք բնության այդ մեծ ուժի նկատմամբ կարգադրություններ անելու: Ջուր տալն էլ բնությունից է կախված այն շրջաններում, վորտեղ արճեստական վոռոգման հնարավորություն չկա, և յեթե ամպեր կուտակվեցին ու անձրև յեկավ՝ լավ, իսկ յեթե չէ՝ բույսերը յերաշտից տապակվում են: Բացի ջրից, լույսից, ջերմությունից և ողից, մարդիկ հնարավորություն ունեն բույսերին տալու բոլոր այն սննդատու նյութերը, վորոնց կարիքը նրանք զգում են: Այդ բանը այլևս բնությունից չի կախված, այլ միայն մեզանից:

Յերկար տարիների փորձերից հետո վերջնականապես պարզվել է, վոր բույսերը ամենից շատ հետևյալ

սննդարար նյութերի կարիքն են զգում— 1. ազոտ, 2. ֆոսֆորաթթու, 3. կալի, 4. կիր, 5. յերկաթ, 6. մագնեզիում, 7. ծծումբ և մի քանի ուրիշ նյութեր, վորոնք յերկրորդական նշանակութուն ունեն: Այս թված նյութերը բույսերի համար այնքան անհրաժեշտ են, վոր յեթե նրանցից մեկը կամ մի քանիսը հողերի մեջ չլինեն, բույսերը կամ ամենևին չեն աճիլ, կամ շատ նվազ կմնան:

Կիրը, յերկաթը, մագնեզիումն ու ծծումբը համարյա բոլոր հողերում բավարար չափով լինում են, այնպես վոր բույսերը դրանց կարիքը շատ քիչ դեպքերում են զգում: Բայց ազոտ, ֆոսֆորաթթու ու կալի շատ չընչին քանակությամբ են լինում հողերի մեջ և ամենահարուստ սեահողերի մեջ անգամ սրանք շատ քիչ քար նակությամբ են լինում:

Բավական չե, վոր այս նյութերը շատ չնչին քանակությամբ են լինում հողերի մեջ: Բանն այն է, վոր ամեն մի բույս հողից ազահությամբ ծծում է ամենից առաջ հենց ազոտ, ֆոսֆորաթթու և կալի, դրա համար ել տարիների ընթացքում շարունակ ցանք անելով, վերջիվերջո այդ նյութերը հողի մեջ այնքան են պակասում, վոր բույսերն այլևս հողի մեջ քիչ պաշար գտնելով, առաջվա նման բերք չեն տալիս:

Վորպեսզի այդ նյութերը հողի մեջ բավարար քանակությամբ հավաքվեն, կարելի յե մի քանի տարի այլևս վոչինչ չցանել և հողը խամ թողնել: Հին ժամանակ, յերբ հողը շատ շատ էր, իսկ ազգաբնակչութունը քիչ, հենց այդպես ել անում էին: Միևնույն հողակտորը մի քանի տարի վարելուց կամ ցանելուց հետո թողնում էին այդ հողը 5, 6, 10 տարի առանց

ցանելու և անցնում մի ուրիշ տեղ նորից մի քանի տարի վար ու ցանք անում և տասնյակ տարիներից հետո նորից վերադառնում և վար ու ցանք անում հին, խամ թողած հողի վրա:

Բայց հիմա այդպես չե:

Այժմ շատ քիչ յերկրներ կան, ուր հողն առաջվա նման առատ է, իսկ ազգաբնակչունը քիչ: Այժմ ամեն տեղ հողի սով է:

Մենք գիտենք, վոր Հայաստանում հող շատ քիչ կա և շնչին ամենաշատը ընկնում է մեկ դեսյատին, իսկ շրջաններ կան, ինչպես որինակ Մեղրու շրջանը, վորտեղ շնչին հազիվ մեկ քառորդ դեսյատին է ընկնում: Պարզ է, վոր այս պայմաններում մենք վոչ մի հնարավորութուն չունենք հողը մի քանի տարով խամ թողնելու, և յեթե հողը յերկար տարիների մշակության ու ցանք անելու պատճառով աղքատացել է և շատ քիչ բերք է տալիս, ուրեմն պետք է աշխատենք հողին վերադարձնել բույսերին անհրաժեշտ այն սննդարար նյութերը, այսինքն ազոտ, ֆոսֆորաթթու և կալի, վորոնք պակասել են հողի մեջ:

Արտասահմանյան շատ յերկրներում, որինակ Գերմանիայում, վաղուց արդեն այդ նյութերով հողը պարտացնում են արհեստական ձևով: Կան հատուկ հանքային աղեր, մեր սովորական գործածած աղին նման, վորոնց մեջ այդ նյութերը կան: Կա, որինակի համար ազոտի հանքային աղ, վոր կոչվում չիլիական սելիտրա, կան նաև ֆոսֆորաթթվի և կալիի պարարտացման աղեր, բայց այդ պարարտանյութերը մեզանում չեն գտնվում և յեթե գտնվում էլ են՝ բավական թանգ արժեն: Բացի դրանից, այդ պարարտանյութերը

մեր հողերում փորձված չեն, դրա համար ել նրանց գործածութիւնը մեզ մոտ դեռ չի ընդունված:

Բաղմաթիվ փորձերն ու հետազոտութիւնները ցույց են տվել, վոր գոմաղբի մեջ բավարար չափով կան այդ 3 գլխավոր սննդատու նյութերից, դրա համար ել գոմաղբը ամենալավ, ամենաեփան և ամենափորձված պարտանյութն և ուժից ընկած մեր հողերի համար:

Ահա՛ բոլորին լավ հայտնի և մեր յերկրի շատ շքեջաններում գուր սեղը կորչող ու ձորերը թափվող պարտանյութի— գոմաղբի մասին և, վոր մենք այս գրքույկում պիտի խոսենք:

### 3. Ի՞նչ ՆՅՈՒԹԵՐԻՑ Ե ԲԱՂԿԱՅՍՆ ԳՈՄԱՂԲԸ ՅԵՎ Ի՞նչ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՆԱ.

Թարմ գոմաղբը առաջ է գալիս անասունների կոշտ արտաթորութիւններից և մեզից: Գոմաղբն իր մեջ ունի այն բոլոր նյութերը, վորոնց կարիքը զգում են բույսերը:

Չնայած գոյութիւն ունեցող բաղմաթիվ ուրիշ պարտանյութերի, գոմաղբը մինչև այժմ ել համարվում է ամենակարեոր պարտանյութը:

Մեկ սայլ կանոնավոր պահած և նեխված գոմաղբը կըսում է մոտ 15 փութ, վորից 11—12 փութը ջուր է, իսկ մնացած 3—4 փութը կազմում են բույսերին անհրաժեշտ բոլոր սննդատու նյութերը և այն նյութերը, վորոնք առաջ են բերում հումուս, կամ ինչպես ասում են՝ բուսահող:

Հումուս լինում է բոլոր հողերում, բայց վորոշ հողերում, ինչպես որինակ սևահողերն են, լինում է շատ,

իսկ մյուս տեսակի հողերում՝ քիչ: Հումուսը հողերի մեջ առաջ է գալիս զանազան բույսերի և հողի մեջ ապրող միջատների և մանր-մուկնր մեռած կենդանիների փտելուց: Յեւ յերբ գոմաղբը նեխում-փտում է, նրա մեջ ել գոյանում է այդ հումուսը, վոր հողերի համար շատ մեծ նշանակութիւն ունի:

Հումուսի նշանակութեան մասին մենք դեռ կխոսենք: Մենք տեսանք, վոր գոմաղբն առաջ է գալիս կենդանիների պինդ արտաթորութիւնից (թրիքից) և մեզից: Գոմաղբի մեջ մեզի պահպանելը շատ կարեոր է, վորովհետև բույսերի համար ամենակարեոր նյութերից ազոտը և կալիւն ամենից շատ մեզի մեջ են լինում:

Ընթերցողներից շատերը յերեւի կհիշեն, վոր շատ անգամ յերբ գոմ ենք մտնում, այնտեղ կանգնած և լինում ծանր ոգ և մարդու աչքը մի տեսակ այրում է, կծու հոտ է գալիս:

Այդ կծու հոտը նրանից է, վոր անասունների մեզի մեջ յեղած ազոտից գոյանում է ամոնյակ կոչված գազը, վորը գոլորշիանալով, այդ կծու հոտը տարածում է ողի մեջ:

Բույսերի համար մյուս անհրաժեշտ նյութերից գըլխավորը՝ ֆոսֆորաթիւն է, վոր գտնվում է գոմաղբի պինդ մասերում: Գոմաղբը պիտի այնպես պահել, վոր անասունների մեզը, վորի մեջ բավարար չափով ազոտ և կալի յե լինում, պահպանվի և գոլորշիանալով իզուր չկորչի:

Ի՞նչ համար շատ անգամ գոմաղբն ամիսներով թողնում են գոմում, անասունների վտարների տակ, այդ դեպքում գոմաղբի մեջ յեղած ազոտը պահպանվում է ու չի կորչում, վորովհետև անասունները շարունակ

կոխրատում և պնդացնում են գոմաղբը: Ուստի անհրա-  
ժեշտ է ամեն ուր անասունների տակ փչացած դարման  
ու խոտ, կամ լավ չորացած հին փեյին փռել, վոր  
մեզը նրանց մեջ ծծվի ու չկորչի:

Բացի բույսերի համար անհրաժեշտ աննդատու նյու-  
թերից, ինչպես տեսանք, գոմաղբից գոյանում է նաև  
հումուս: Հումուսը հողերի համար շատ մեծ նշանա-  
կություն ունի: Հումուսի շնորհիվ, ծանր կավային հո-  
ղերը փխրանում են, տաք են մնում և դրսի ողջ հեշ-  
տությունը է ներս մտնում հողի մեջ, ուրիշ խոսքով  
հումուսը ծանր կավահողերի ֆիզիքական կազմությունը  
լավացնում է և չի թողնում, վոր հողը կոշտանա, պըն-  
դանա և կեղև կազմի:

Ավազահողերը, ինչպես գիտենք, լինում են շատ  
փխրուն: Այստեղ, ընդհակառակը, հումուսը հողի իրա-  
րից այդ չափազանց բաժան մասերը իմի յե հավա-  
քում, հողի մասնիկները միմյանց հետ է կապում:  
Հումուսի այս հատկությունները բույսերի աճման և  
զարգացման համար չափազանց կարևոր են և հողը  
գոմաղբով պարարտացնելով, մենք բույսերին բացի  
աննդարար նյութեր տալուց, հողը փխրունացնում, լա-  
վացնում ենք: Յեվ վորովհետև գոմաղբը հողի միջի  
հումուսը ավելացնում է և հողը լավացնում, փխրու-  
նացնում է նրան, այդ պատճառով ել գոմաղբով պետք  
է պարարտացնել գլխավորապես այն հողերը, վորոնք  
շատ կոշտ են ու կավային, կամ չափից դուրս թեթև  
են ու ավազային:

Բացի փխրունացնելուց և հողը հումուսով հարստա-  
ցնելուց, գոմաղբն ունի մի այլ կարևոր նշանակու-  
թյուն, նա հողերի մեջ յեղած խոնավությունը պահ-

պանում է և չի թողնում, վոր գորրըշիանա ու կորչի:  
Այս հանգամանքը շատ կարևոր է մանավանդ մեր  
հողերի համար, վորովհետև մեր յերկրում յերաշտ տա-  
րիներ հաճախ են լինում, իսկ այդպիսի դեպքերում  
հողի մեջ յեղած խոնավությունն անհրաժեշտ է ամեն  
կերպ պահպանել: Գոմաղբով պարարտացրած հողերում  
խոնավությունը շատ լավ է պահպանվում և յերաշտը  
նրանց այնպիսի վնասներ չի պատճառում, ինչպես  
պատճառում է չպարարտացրած հողերին:

Գոմաղբի ունեցած բարերար նշանակությունը այս-  
բանով չի վերջանում: Հողը գոմաղբով պարարտացնե-  
լով մենք միևնույն ժամանակ հողը հարստացնում ենք  
մեծ քանակությամբ բակտերիաներով: Բակտերիաները  
շատ մանր ու հասարակ մարմիններ են, վորոնց սո-  
վորական աչքով տեսնել չի կարելի և վորոնք հողերի  
մեջ շատ ոգտակար գործ են կատարում: Շնորհիվ այդ  
բակտերիաների, հողի մեջ յեղած աննդատու նյութերն  
այնպես են փոփոխվում, վոր բույսերի արմատները  
այդ նյութերը հեշտությամբ կարողանում են ծծել:

Ամենքը գիտեն, վոր լավ և իր ժամանակին վարած  
հողը յերկար ժամանակ մնալով՝ փշրվում, փափկում է  
և խմորի պես հասնում: Հողի այդ հասնելը կատար-  
վում է հենց բակտերիաների շնորհիվ: Այն հողերը,  
վորոնց մեջ բակտերիաներ չեն լինում, կամ շատ քիչ  
են լինում, այդպիսի հողերը լավ չեն հասնում, կոշտ  
են մնում: Նման հողերում բույսերը բավաբար չափով  
աննդատու նյութեր չեն գտնում:

Այսպիսով տեսնում ենք, վոր գոմաղբով պարարտա-  
ցնելով հողերը մենք ամենից առաջ նրանց հարստա-  
ցնում ենք բույսերի համար անհրաժեշտ աննդատու

նյութերով, լավացնում ենք հողերի ֆիզիքական հատկութիւնները, այսինքն փխրացնում ենք նրանց: Գոմաղբի հետ մենք հողերի մեջ մտցնում ենք բազմաթիվ բակտերիաներ, վորոնց շնորհիվ հողերի մեջ յեղած սննդատու նյութերը քայքայվում են և ավելի հեշտ ընդունելի դառնում բույսերի համար:

Այսքան կարևոր նշանակութիւն ունի գոմաղբով հողերը պարարտացնելը:

#### 4. ԳՈՄԱՂԲԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Գոմաղբը լինում է զանազան տեսակի Ձիւռ և վոչխարի գոմաղբը կոչվում է «տաք» գոմաղբ, խոշոր յեղջուրավոր անասուններինը—«սառը» գոմաղբ: Ամենից սառն աղբը խոզերինն է: Տաք գոմաղբը, այսինքն ձիերինն ու վոչխարներինն ավելի շուտ է քայքայվում և արագ ազդում, քան ֆնացած անասուններինը: Դրա պատճառն այն է, վոր «տաք» գոմաղբն իր մեջ ունի բույսերի կողմից հեշտութեամբ յուրացվող սննդատու նյութեր, քան սառը գոմաղբը, վորն ավելի դանդաղ է փտում և ավելի դժվար մարսելի նյութեր ունի:

Գոմաղբի կոշտ մասերն ել տարբեր հատկութիւններ ունեն: Ձիերինն ու վոչխարներինը, ինչպես գիտենք, ավելի չոր է լինում, քան ֆնացած անասուններինը: Խոշոր կույտերով պահելու դեպքում ձիերի և վոչխարների գոմաղբն ավելի արագ ու շուտ է տաքանում և քայքայվում, քան մյուս անասուններինը, վորովհետև ձիերի և վոչխարների գոմաղբի մեջ ջուր քիչ է լինում, իսկ խոշոր յեղջուրավոր անասուններինը շատ է ջրալի լինում: Այսպիսով, տարբեր անասուն-

ների գոմաղբի արժեքը վորոշվում է նրանց մեջ յեղած ջրի քանակով:

Բայց միևնույն տեսակի անասունների գոմաղբն ել տարբեր է լինում, նայած տված կերին ու նրա կատարած աշխատանքին:

Այսպես որինակ, կթի կովերի գոմաղբի մեջ յեղած սննդարար նյութերը՝ ազոտը, ֆոսֆորաթթուն, կալին ավելի պակաս են, քան յեզան կամ ցուլի գոմաղբինը, վորովհետև կթի կովերին տված սննդանյութերի մի մասը անցնում է կաթին: Նույնը կարելի յէ ասել մյուս անասուններին տված կերի մասին: Վորքան անասունի կերն առատ է ու սննդարար, այնքան նրանից ստացված գոմաղբը հարուստ է սննդատու նյութերով: Գոմաղբ, թեփով, լավ խոտով ու արմատապտուղներով կերակրվող անասունի գոմաղբի մեջ մոտավորապես յերկու անգամ ավել ազոտ, ֆոսֆորաթթու և կալի յէ լինում, քան այն անասունների գոմաղբում, վորոնք միայն դարման կամ խոտ են ուտում: Մասցու անասունների գոմաղբը ավելի արժեքավոր է, քան կաթնատու անասուններինը:

Այսպիսով տեսնում ենք, վոր լավ կերը վոչ միայն ավելացնում է անասուններից ստացված ոգուտը, այլ և մեր դաշտերին ավելի արժեքավոր պարարտանյութ է տալիս, վորն իր հերթին մեծ չափերով բարձրացնում է հողի բերքը:

#### 5. ԻՆՉՊԿԵՍ ՊԱՀԵՆՔ ԳՈՄԸ, ՎՈՐ ԳՈՄԱՂԲԻ ՄՆՆԴՍՏՈՒ ՆՅՈՒԹԵՐԸ ԶԿՈՐԶԵՆ.

Ինչպես տեսանք, գոմաղբի մեջ յեղած կարևոր սննդատու նյութերը ամենից շատ կորչում են մեզնից,

այսինքն գումաղբի ջրալի մասից, յեթե գումում լավ  
չհետեանք նրա պահպանելուն: Մենք տեսանք, վոր շատ  
անգամ գումերում անասունների մեզը գորշխանում և  
և կորցնում իր մեջ յեղած ամենաթանկագին նյութը—  
ագորտը: Բայց այդ չէ միայն. հողե հատակ ունեցող  
գումերում անասունների մեզի մեծ մասը ծծվում և  
հողի մեջ և բացի այն, վոր գարշահոտություն և առա-  
ջացնում և իզուր կորչում, ցեխոտում ու կեղտոտում  
և գոմի հատակը, վորից թե անասուններն են նեղվում  
և թե ողն և ապականջում և գումում աշխատողի հա-  
մար դժվարություններ են առաջ գալիս, վորովհետև  
կեղտոտ ու ցեխոտ գոմն ամեն որ մաքրելը շատ դժ-  
վար և:

Վորպեսզի գումաղբի անհրաժեշտ նյութերը ի գուր  
չկորչեն և գումը մաքուր լինի, պետք է գոմի հատակը  
աղյուսով կամ ավելի լավ և՛ սալաքարերով սալահա-  
տակել: Լավ սալահատակած գումում անասունների մեզը  
չի կորչի և գոմ մաքրելն ևլ շատ կհեշտանա:

Վորքան ևլ սալահատակած լինի գոմի հատակը, այ-  
նուամենայնիվ որվա մեջ անասուններն այնքան շատ  
են արտաթորում, վորը անասունների տակը ֆնալով  
կեղտոտում են հենց անասուններին, յեթե սրանք պառ-  
կում են հատակին: Իսկ անասունների մաքուր լինելը  
շատ կարևոր է նրանց առողջության համար: Բացի  
զրանից, շատ անգամ մեզը հոտում և ու լճանում գոմի  
ցած մասերում, կամ հենց ֆնում և անասունների տակ  
ու թացացնում նրանց վորքերն ու մարմինը:

Սրա առաջն առնելու համար ամեն որ առավոտյան  
գումը մաքրելուց հետո, անասունների տակը վոր և է  
բան են փռում: Արտասահմանում և Ռուսաստանում

ընդունված և անասունների տակ փռել ծղոտ, վորով-  
հետև այնտեղ դարման չեն պարաստում և անասուն-  
ներին խոտով, քուսպով, թեփով ու արմատապտուղ-  
ներով են կերակրում: Ծղոտն այն հատկությունն ունի,  
վոր անասունների մեզը ծծում և իր մեջ և հատակը  
չոր և պահում: Ամեն մի խոշոր անասունի տակ որե-  
կան փռում են 10—12 ֆունտ ծղոտ:

Վորովհետև մեղնում ծղոտ չկա, ուստի նրա փոխա-  
րեն կարելի չէ գործ ածել փչացած դարման, անասուն-  
ների կրճոնք և այլն, վորոնք շատ հեշտությամբ կա-  
րող են ծծել գումաղբի ջրալի մասերը և թույլ չտալ,  
վոր գումը կեղտալի:

Այն շրջաններում, վորտեղ մոտիկ անտառներ կամ  
այգիներ կան, ծղոտի կամ անպետք դարմանի փոխա-  
րեն կարելի չէ գործածել ծառերից աշնանը թափված  
տերևներ: Դրա համար աշնանից պետք է ժողովել այդ  
տերևները և ամեն որ հարկավոր քանակությամբ փռել  
անասունների տակ: Թեև տերևներն այնքան ևլ լավ  
չեն ծծում ջրային մասերը, բայց նա յել լավ և այն  
տեսակետից, վոր անասունների տակը մաքուր պահե-  
լուց բացի, գումաղբի հեռ խառնվելով՝ բավականաչափ  
ավելացնում են գումաղբի անոգատու նյութերը:

Թե մեկը և թե մյուսը չլինելու դեպքում, ինչպես  
արդեն ասել ենք յերրորդ գլխում, անասունների տակ  
փռելու համար կարելի չէ գործ ածել չոր և մանր փշր-  
ված աղբ կամ մինչև իսկ չոր հող, վորը ամեն որ պետք  
է սրբել և նորը փռել, վորպեսզի գոմում ցեխ չզոյանա:

Գոմերը պետք է ողանցքներ ունենան, վորպեսզի  
փչացած ողը շարունակ մաքրվի: Պետք է նկատի ունե-  
նալ, վոր գումաղբից առաջանում և անխաթիթու կոչված

1003  
82111

գաղը, վոր շատ վնասակար է անասուններէ համար, այդ պատճառով որանցքները պետք է շինված լինեն այնպես, վոր թե թարմ ողը բավարար չափով ներս մտնի գոմ և թե ներսի փչացած ողը մաքրվի:

Վորպեսզի գոմի ողը նեխված չլինի, անհրաժեշտ է շաքաթը մեկ անգամ գոմում անասուններէ տակը շաղ տալ նոր հանգցրած կրափոշի:

### 6. ՎՈՐՄՏԵՂ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵԼ ԳՈՄԱՂԲԸ.

Մեզանում շատ քչերն են հոգ տանում գոմաղբը պահելու մասին: Սովորաբար վոչ միայն գոմաղբը, այլև ամեն տեսակի աղբ դուրս են տանում և թափում ձորերը, կամ աղբանոցները, ուր գոմաղբը յերկար ժամանակ անխնամ մնալուց փչանում, կորչում է, կամ գտնվում է մեկը, վոր գոմաղբը գնահատելով հավաքում է և տանում փռում իր բանջարանոցը, այգին կամ դաշտը: Մեզանում մեծ մասամբ այս թանկագին պարարտանյութը ծառայում է վորպես վառելիք: Բայց հենց սկզբում մենք տեսանք, վոր գոմաղբը վառելիք դարձնելով մեր գյուղացիք մեծ վնասներ են կրում և իրենց դաշտերի բերքի մի մասից զրկվում: Մենք տեսանք նաև այն, վոր քանի գնա, այնքան մեր դաշտերի բերքը ավելի պիտի պակասի, յեթե մենք հողից բերքի միջոցով վերցրած նյութերը նորից հողին չվերադարձնենք:

Յեթե մենք վորոշել ենք գոմաղբը գործածել վորպես պարարտանյութ, ապա պիտի հոգ տանենք, նրան պահել այնպես, վոր դաշտերը նրանով պարարտացնելով իսկական սպառնալիք տեսանք: Վատ պահած գոմաղբը չի

կարող մեր դաշտերի բերքը բարձրացնել, վորքան ել շատ տանք հողին: Վատ պահելուց գոմաղբը կորցնում է իր ամենալավ հատկութուններն ու սնդարար նյութերը:

Պարարտացման համար գոմաղբ պահելիս մեր ամբողջ հոգսը պիտի լինի—գոմաղբը պահել այնպես, վոր նրա մեջ յեղած սննդարար կարևոր նյութերը չըկորչեն, կամ այդ կորուստը շատ քիչ լինի: Դրա համար ել գոմաղբը վոչ թե պետք է ձորերը թափել կամ աղբանոցներում անխնամ թողնել, այլ նրա պահելու համար պետք է հատուկ տեղեր ունենալ:

Դրա համար պետք է նկատի ունենալ հետևյալը.—

1. Աղբանոցի մեծութունը կախված է յեղած տափարի թվից: Մեկ գլուխ խոշոր անասունի համար 1  $\frac{1}{2}$  քառակուսի սաժեն աղբանոցի տեղը բավական է: Ուրեմն, յեթե մեկը ունի 4 գլուխ տավար, աղբանոցի համար պետք է հատկացվի վեց քառ. սաժեն տեղ:

2. Աղբանոցը պետք է ունենա մեկ ու կես արշին խորութուն, իսկ կողքի պատերը չպիտի լինեն ուղիղ, այլ մի քիչ թեք: Աղբանոցի հատակը պետք է շինված լինի այնպես, վոր գոմաղբի ջրային մասերը չծծվեն, հակառակ դեպքում, ինչպես գիտենք, գոմաղբի ամենաթանկագին մասերը—կալին և ազոտը, վոր գտնվում են մեզի մեջ, կծծվեն հողի մեջ և անսպառ կկորչեն: Դրա առաջն առնելու համար պետք է աղբանոցի հատակը սալահատակել: Կարելի չէ նաև հատակը կավով սվաղել, բայց կավն այնպես չի պահում ջրային մասերը, ինչպես քարով սալահատակած հատակը: Յեթե հնարավոր է՝ սալահատակի քարերի արանքները լցնել ցեմենտով:

3. Աղբանոցը վորքան կարելի յե, պետք է մոտ լինի գոմին, վորպեսզի ամեն ոք գոմը մաքրելիս ստիպված չլինենք գոմաղբը շատ հեռու տանել, և իզուր ժամանակ կորցնել: Բացի դրանից, աղբանոցի մոտ լինելը լավ է այն տեսակետից, վոր հեշտությամբ կարելի յե անասունների մեզը գոմից դուրս հանել և թափել աղբանոցը: Յեթե հնարավոր է, աղբանոցը արևելքից, հարավից և արևմուտքից պետք է ծածկված լինի, վորպեսզի արեգակի ճառագայթները անմիջապես գոմաղբի վրա չնկնեն:

4. Աղբանոցի մեջ պետք է թափել վոչ միայն տավարի գոմաղբը, այլև մյուս բոլոր անասուններինը— ձիերինը, խոզերինը, վոչխարներինը: Բակի աղբն էլ պետք է այդ աղբանոցը լցնել, վորովհետև նա յել լավ պարարտանյութ է:

#### 7. ԳՈՄԱՂԲԸ Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵՆ ԱՂԲԱՆՈՑՈՒՄ.

Ինչպես տեսանք, գոմաղբի պահելու գլխավոր նպատակն է՝ վորքան կարելի յե քիչ կորուստ ունենալ: Դրա համար գոմաղբը աղբանոց թափելիս ամենից առաջ պետք է հոգ տանել, վոր աղբանոցում նա հավասար շերտերով լցվի և առանձին առանձին կույտեր չկազմի: Բացի դրանից, պետք է հոգ տանել, վոր աղբանոցը թափած գոմաղբը վորքան կարելի յե միատեսակ չլինի, ուստի պետք է աշխատել տարբեր անասունների գոմաղբը իրար խառնել և վոչ թե տարբեր տեղեր թափել:

Պետք է լավ հիշել, վոր վորքան փխրուն լինի գոմաղբը, այնքան նա շուտ կտաքանա ու կսկսի նեխել փտել, վորովհետև դրսի ողը փխրուն գոմաղբի մեջ

հեշտությամբ է մտնում և նրա մեջ առաջ են գալիս մեծ քանակությամբ բակտերիաներ ու սննդարար նյութերի մեծ կորուստի պատճառ դառնում: Վորպեսզի այդ տեղի չունենա, ամեն ոք գոմաղբը աղբանոց թափելուց հետո պետք է նրան հավասար փռել և վտառելով լավ կոխրձել, վոր պնդանա և փխրուն չմնա: Կոխրձելով և պնդացնելով մենք թույլ չենք տալիս, վոր դրսի ողը ազատ կերպով ներս մտնի գոմաղբի մեջ, և պահում ենք նրա մեջ յեղած խոնավությունը, առանց վորի գոմաղբը կանոնավոր փտել չի կարող: Ուրիշ խոսքով, կոխրձելով և պնդացնելով, մենք աղբանոցում գոմաղբը պահում ենք այնպես, ինչպես նա կպահվեր՝ յեթե թողնեյինք գոմում, հենց անասունների վտառի տակ: Իսկ մենք դիտենք, վոր գոմում, անասունների վտառի տակ պահելով մենք ստանում ենք պարարտացման համար ամենալավ գոմաղբը, վորովհետև նրա մեջ յեղած սննդարար նյութերը լավ են պահվում և չեն կորչում:

Աղբանոցում այս ձևով պահվող գոմաղբից պիտի հեռու պահել խոզերին և հավերին, վորովհետև նրանք քանդում և փչացնում են վոչ միայն կոխրձած գոմաղբը այլև ամբողջ աղբանոցը:

Չափազանց կարևոր է, վոր աղբանոցում պահվող գոմաղբն իր մեջ բավարար խոնավություն ունենա, մանավանդ ամառը, յերբ յեղանակը տաք է և գոմաղբը հեշտությամբ կորցրում է իր մեջ յեղած խոնավությունը:

Չորացող գոմաղբը արագ է սկսում փտել, մեջը դատարկ տեղեր են գոյանում և ողով լցվում: Իսկ մենք տեսանք, վոր ողը ներս մտնելով առաջ է բերում սննդարար նյութերի կորուստ:

Անասունները տակն ամեն որ փշացած դարման փոփ-  
լով և այդ դարմանը կամ կրճոնքը խառնվելով գոմ-  
աղբի հետ, պահում և գոմաղբի խոնավությունը: Բացի  
դրանից, գոմաղբի մեջ խոնավություն պահելու համար  
կարելի չէ աղբանոցի յերեսը ամառը թեթև կելը շաղ  
տալ և լավ կոխրճել: Պետք է լավ հիշել, վոր ինչքան  
գոմաղբը դրսի ողից ու բամբիսներից պաշտպանված լի-  
նի, այնքան նա քիչ կկորցնի իր մեջ յեղած սննդա-  
տու նյութերից:

### 8. ԳՈՄԱՂԲՈՂ ԴԱՇՏ ՏԱՆԵԼ.

Գոմաղբը դաշտ պիտի տանել ու փոխի հողը վարե-  
լուց հետո: Յեթե հողը վարում ենք աշնանը, ապա գո-  
մաղբը դաշտ պետք է տանել հողը վարելուց մի 2 շա-  
բաթ առաջ, վորպեսզի կարելի լինի մինչև վարելը ամ-  
բողջ դաշտում հավասարապես փռել: Նույնը պետք է  
անել, յեթե վարելու յենք գարնանը: Բայց մեզանում  
մեծ մասամբ վարն անում են հունիսին, այսինքն ա-  
մառվա տար ժամանակ, դաշտային աշխատանքների  
յեռուն շրջանում և հազիվ թե մեր գյուղացիք հնարա-  
վորություն ունենան այդ ժամանակ զբաղվել գոմաղբը  
դաշտ տանելու աշխատանքով, վորովհետև թե իրենք  
են զբաղված լինում և թե իրենց լծկան անասունները:

Ուրիշ յերկրներում վարը անում են հնձից հետո՝ աշ-  
նանը՝ կամ վաղ գարնանը: Այդ պայմաններում հնա-  
րավոր է լինում գոմաղբը դաշտ տանել աշնանը կամ  
ձմեռվա ընթացքում, վորովհետև այդ ժամանակ թե  
իրենք բավական ազատ ժամանակ են ունենում և թե  
իրենց լծկան անասուններն են ազատ լինում:

Վորպեսզի հնարավոր լինի առանց մյուս աշխատանք-  
ներին վնասելու գոմաղբը դաշտ տանել, այդ տեսակե-  
տից մեր պայմաններում ամենից հարմար ժամանակը  
պետք է համարել ձմրան ամիսները, յերբ ազատ ժա-  
մանակ շատ է լինում: Այս դեպքում դաշտ տարած  
գոմաղբը պետք է թափել դաշտի մի ծայրում խոշոր  
կոյտերով, լավ կոխրճել, մոտ 2—3 վերջով հողով ծած-  
կել ու թողնել մինչև վարը սկսելը: Հսկառակ դեպքում  
յեթե փոքրիկ կույտերով դաշտում թողնենք կամ հա-  
վասար փռենք ու թողնենք, մինչև վարն սկսելը, գոմ-  
աղբի խոնավությունը կպակասի, կչորանա, ողի և բակ-  
տերիաների ազդեցությունից սննդատու նյութերի մի  
մասը կկորչեն, մի մասն էլ կծծվի հողի մեջ, իսկ կույ-  
տերի մեջ կմնան միայն գոմաղբի չորացած կոշտ մա-  
սերը, վորոնց վարելուց առաջ փռելով, այլևս չենք  
ստանալ այն ոգուտը, ինչ վոր կարող էլինք ստանալ,  
յեթե իսկույն փռելինք ու վարելինք:

Բացի դրանից գոմաղբը փոքրիկ կույտերով դաշտում  
թափելը և այդքան յերկար ժամանակ թողնելն այն  
վատ հետևանքը կունենա, վոր կույտերի տակի հողը  
լավ պարարտացած կլինի և վարելուց ու ցանքս անելուց  
հետո այն բոլոր տեղերում, վորտեղ գոմաղբի կույտերն  
են յեղել՝ բույսերը կաճեն փարթամ, իսկ մնացած տե-  
ղերում՝ նվազ և թույլ, ուրիշ խոսքով արտը՝ կլինի  
անհավասար, վոր ցանկալի չէ:

Դրա համար էլ ավելի լավ է դաշտի մի ծայրում  
4—5 տեղ խոշոր կույտեր կազմել, ինչպես վերևում  
ասացինք, և վարելուց մի քանի օր առաջ հավասար  
փռել և իսկույն վարել: Այս ձևով գոմաղբի սննդարար  
նյութերը կպահվեն և կորուստը շատ չնչին կլինի:

Յեթե վարն անուամ ենք վաղ գարնան, այդ դեպքում առանց վախենալու՝ թե գոմաղբի սննդատու նյութերը կարող են դուր կորչել՝ կարելի չե ձմրան ամիսներին ընթացքում գոմաղբը տանել դաշտ և փռել ու այդպես թողնել մինչև գարուն:

Կրկնում ենք, վոր գոմաղբը դաշտ տանելու ամենահարմար ժամանակը՝ վարելուց առաջ տանել և փռելն է: Վարելու ժամանակ պետք է այնպես անել, վոր փռած գոմաղբն ամբողջապես ծածկվի հողով, վորովհետև չծածկված և հողի յերեսին մնացած գոմաղբը չի փտում և անողուն է մնում: Պետք է աշխատել, վոր վարելու ժամանակ գոմաղբը հողի մեջ շատ խոր չընկնի, մանավանդ յեթե հողը ծանր կավային է: Հողի մեջ գոմաղբը խոր թաղելով, մենք նրան զրկում ենք դրսի ոգից, վորի հետևանքով գոմաղբի ազդեցութունը պակասում է: Յեթե աղբանոցում պահելիս հարկավոր եր թույլ չտալ, վոր դրսի ոգը ազատ ներս մտնի գոմաղբի մեջ, այդ նրա համար եր, վորպեսզի նրա մեջ յեղած սննդաբար նյութերը չպակասեն և իզուր չկորչեն: Դաշտում դրա կարիքը չկա, վորովհետև այդ նյութերը հողի մեջ են մնում և կորչելու տեղ չունեն:

9. Ի՞ՆՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Ե ՏԱԼԻՍ ԳՈՄԱՂԲՈՎ,  
ՊԵՐԱՐՏԱՅՐԱԾ ՀՈՂԸ.

Գոմաղբը, մանավանդ լավ պահած գոմաղբը, կոչվում է լրիվ պարարտանյութ, վորովհետև ինչպես արդեն գիտենք, նրա մեջ լինում են այն բոլոր սննդատու նյութերը, վորոնց կարիքը բույսերն ունեն: Բացի այդ նյութերից, գոմաղբը, ինչպես տեսանք, հողի մեջ ավելաց-

նում և հումուսը, վորի շնորհիվ հողը լավանում է, մնում է փխրուն, այլևս կոշտեր չեն լինում, իսկ այդ բոլորը շատ մեծ նշանակութուն ունի բույսերի համար, վորովհետև կոշտ ու պինդ հողերում սերմերը դժվարությամբ են ծլում և հողի տակից շատ անգամ իրենց ծիլերը չեն կարողանում դուրս հանել, վորովհետև փոքրիկ ու թույլ ծիլերի ուժը չի ներում հողի կոշտերը ճեղքել և դուրս գալ: Իսկ մենք գիտենք, վոր մեր հողերի մեծ մասը տարիներ շարունակ մշակելով և ցանելով կոշտացել ու անպետքացել են:

Մեր բոլոր շրջանների գյուղացիք շարունակ գանգատվում են, վոր հողն այժմ այն չե, ինչ վոր սրանից մի 40—50 տարի առաջ եր, վոր առաջ համարյա ամեն տարի լավ բերք եր ստացվում, իսկ այժմ շատ անգամ ցանած սերմացուն էլ յեա չի գալիս:

Դրա պատճառները շատ են, բայց ամենից գլխավոր պատճառն այն է, վոր մենք հողից շարունակ վերցնում ենք, բայց հողին վոչինչ չենք վերադարձնում: Ամեն մի փութ հատիկի ու կարտոֆիլի, ամեն մի ֆունտ կաթի ու պանրի մեջ մենք ցորնի ու խոտի միջոցով վերցնում ենք հողի սննդատու նյութերը և այդ բոլորը տարիներ շարունակ կամ ծախում ենք, կամ ինքներս ուտում:

Բայց ասենք թե մենք վորոշել ենք գոմաղբով պարարտացնել մեր հողերը, այսինքն վերադարձնել հողին այն ամենը, ինչ վոր վերցրել ենք բերքի կամ խոտի միջոցով: Հերիք կանի՞ արդյոք մեր ունեցած գոմաղբը այդ նպատակի համար:

Յեթե մեկը ունի 2 տավար և 2 դեպատին հող, կա՞րո՞ղ ե արդյոք պարարտացնել իր բոլոր հողերը:

Հաշվենք ու տեսնենք: Յերկու տավարից գյուղացին տարվա մեջ կարող է ստանալ վոչ պահաս, քան 500 փութ գոմաղբ: Մեկ դեպատին հող պարարտացնելու համար հարկավոր է, ինչպես սկզբում էլ սասցինը, 2000—2500 փութ գոմաղբ: Այս հաշվով դուրս է գալիս, վոր մենք մեր ունեցած գոմաղբով ամեն տարի կարող ենք պարարտացնել միայն կես դես. հող, այսինքն՝ մեր ունեցած գոմաղբը հերիք չէ մեր հողերը պարարտացնելու համար:

Բայց այս հաշիվը ճիշտ չէ:

Բազմաթիվ փորձերը թե արտասահմանում և թե մեզ մոտ ցույց են ավելի վոր մի անգամ գոմաղբով պարարտացրած հողը 3—4 մինչև անգամ 5 տարի լավ բերք է տալիս և յեթե մենք կարողանանք ամեն տարի մեր ունեցած հողից կես դեպատին պարարտացնել, ապա չորս տարվա ընթացքում մեր 2 դեպատինը պարարտացված կլինի, իսկ հինգյերորդ տարին առաջին անգամ պարարտացրած հողը կարող ենք նորից պարարտացնել: Սրանից հետևում է, վոր մեր ունեցած գոմաղբը լիուլի հերիք է մեր դաշտերը պարարտացնելու համար:

Գոմաղբով պարարտացրած հողերի տված ոգուաը զանազան հողերում տարբեր է լինում: Բայց յերկար տարիների (40—50 տարվա) փորձերից հետո պարզվել է, վոր մեկ դեպատին 2400 փութ գոմաղբով պարարտացրած հողից ստացվել է ավելի, քան չպարարտացրածից:

Այսպես, որինակ, Ռուսաստանում—

Պրտավայում . . . . . 17 փութ,

Պրոսյանակի կայանում . . . 35 »

Չմիևում . . . . . 26 փութ,

Չուրտոնոշում . . . . . 22 »

Սրանից պարզ յերևում է, վոր 2400 փութ կամ 120—130 սայլ գոմաղբն ամեն մի դեպատինին 17—35 փութ ավելացնում է բերքը, այսինքն՝ յեթե մենք այժմ, առանց պարարտացնելու մի դեպատինից ստանում ենք 40 փութ, գոմաղբով պարարտացնելով կստանանք 57—75 փութ հացահատիկ:

Արտասահմանում ստացված հետևանքներն ավելի զարմանալի յեն: Գերմանիայում 40 տարի առանց գոմաղբով պարարտացնելու ստանալիս յեն յեղել մի դեպատինից 50 փութ հացահատիկ, իսկ յերբ սկսել յեն պարարտացնել, ստացել են 150 փութ, այսինքն 100 փթով ավելի:

Հայաստանում ամեն տարի ցանվում է մոտ 150 հազար դեպատին հացահատիկ և ամեն մի դեպատինից մենք միջին հաշվով ստանում ենք 40 փութ, վորից 10 փութն էլ սերմացու: Ուրիշ խոսքով ամբողջ Հայաստանում ամեն տարի հացահատիկ ստացվում է 6 միլիոն փութ:

Յեթե մեր վարելահողերն սկսենք պարարտացնել գոմաղբով, ապա ամենապակասը ամեն մի դեպատինից մենք 15 փութ ավելի կստանանք, իսկ 150 հազար դեպատինից կստանանք 2 միլիոն 250 հազար փութ հացահատիկ ավելի: Այս հաշվից յերևում է, վոր մենք ամեն տարի ամենապակասը կորցնում ենք 2 միլիոն 250 հազար փութ հացահատիկ, իսկ յեթե գնահատենք ամեն մի փութը 1 ու 50 կոպ., կտեսնենք, վոր գյուղացիությունն ամեն տարի կորցնում է 3 և կես միլիոն ուրբլի:

Հաշվենք ու տեսնենք: Յերկու տավարից գյուղացին տարվա մեջ կարող է ստանալ վոչ պակաս, քան 500 փութ գոմաղբ: Մեկ դեսյատին հող պարարտացնելու համար հարկավոր է, ինչպես սկզբում ել ստացինք, 2000—2500 փութ գոմաղբ: Այս հաշվով դուրս է գալիս, վոր մենք մեր ունեցած գոմաղբով ամեն տարի կարող ենք պարարտացնել միայն կես դես, հող, այսինքն՝ մեր ունեցած գոմաղբը հերիք է մեր հողերը պարարտացնելու համար:

Բայց այս հաշիվը ճիշտ է:

Բազմաթիվ փորձերը թե արտասահմանում և թե մեզ մոտ ցույց են տվել, վոր մի անգամ գոմաղբով պարարտացրած հողը 3—4 մինչև անգամ 5 տարի լավ բերք է տալիս և յեթե մենք կարողանանք ամեն տարի մեր ունեցած հողից կես դեսյատին պարարտացնել, ապա չորս տարվա ընթացքում մեր 2 դեսյատինը պարարտացված կլինի, իսկ հինգերորդ տարին առաջին անգամ պարարտացրած հողը կարող ենք նորից պարարտացնել: Սրանից հետևում է, վոր մեր ունեցած գոմաղբը լիովին հերիք է մեր դաշտերը պարարտացնելու համար:

Գոմաղբով պարարտացրած հողերի տված ոգուտը զանազան հողերում տարբեր է լինում: Բայց յերկար տարիների (40—50 տարվա) փորձերից հետո պարզվել է, վոր մեկ դեսյատին 2400 փութ գոմաղբով պարարտացրած հողից ստացվել է ավելի, քան չպարարտացրածից:

Այսպես, որինակ, Ռուսաստանում—

Պոլտավայում . . . . . 17 փութ,

Պրոտյանսկի կայանում . . . 35 »

Զմիևում . . . . . 26 փութ,

Զոլոտոնոշում . . . . . 22 »

Սրանից պարզ յերևում է, վոր 2400 փութ կամ 120—130 սայլ գոմաղբն ամեն մի դեսյատինին 17—35 փութ ավելացնում է բերքը, այսինքն՝ յեթե մենք այժմ, առանց պարարտացնելու մի դեսյատինից ստանում ենք 40 փութ, գոմաղբով պարարտացնելով կստանանք 57—75 փութ հացահատիկ:

Արտասահմանում ստացված հետևանքներն ավելի զարմանալի յեն: Գերմանիայում 40 տարի առանց գոմաղբով պարարտացնելու ստանալիս յեն յերկ մի դեսյատինից 50 փութ հացահատիկ, իսկ յերբ սկսել յեն պարարտացնել, ստացել են 150 փութ, այսինքն 100 փթով ավելի:

Հայաստանում ամեն տարի ցանվում է մոտ 150 հազար դեսյատին հացահատիկ և ամեն մի դեսյատինից մենք միջին հաշվով ստանում ենք 40 փութ, վորից 10 փութն էլ սերմացու: Ուրիշ խոսքով ամբողջ Հայաստանում ամեն տարի հացահատիկ ստացվում է 6 միլիոն փութ:

Յեթե մեր վարելահողերն սկսենք պարարտացնել գոմաղբով, ապա ամենապակասը ամեն մի դեսյատինից մենք 15 փութ ավելի կստանանք, իսկ 150 հազար դեսյատինից կստանանք 2 միլիոն 250 հազար փութ հացահատիկ ավելի: Այս հաշվից յերևում է, վոր մենք ամեն տարի ամենապակասը կորցնում ենք 2 միլիոն 250 հազար փութ հացահատիկ, իսկ յեթե գնահատենք ամեն մի փութը 1 ու 50 կոպ., կտեսնենք, վոր գյուղացիութունն ամեն տարի կորցնում է 3 և կես միլիոն ուրբլի:

Բայց վորքան դարման ենք կորցնում: Պարզվում է, վոր գումաղբով պարարտացնելով մենք վոչ միայն հացահատիկի բերքն ենք ավելացնում, այլև դարմանինը:

Փորձերը ցույց են ավել, վոր յեթե առանց պարարտացնելու մի դեպատինից ստացվում է 50 փուլթ դարման, պարարտացրած հողից ստացվում է 70—80, մինչև անգամ 100 փուլթ: Յեթե հաշվենք, կտեսնենք, վոր ամեն մի դեպատինին 30 փուլթ դարման կորցնելով, մենք տարեկան միայն դարման կորցնում ենք 4 ու կես միլիոն փուլթ այն ժամանակ, յերբ մեր անասունները ձմեռվա վերջերին կիսաքաղց կատրվում են կամ կրճոնք են ուտում:

Յեվ անհա անագին հարստություն մենք կորցնում ենք այն միակ պատճառով, վոր ամեն տարի հարյուր միլիոն փթից ավելի գումաղբ կամ ձորերն ենք թափում և անոգուտ փչացնում, կամ վառում, մոխիր ենք շինում ու քամուն տալիս:

Այսպիսով մենք վատնում ենք անագին հարստություն, առանց գիտակցելու, վոր դրանով մեր իսկ ձեռքով կարում ենք մեր բերնի հացը և մեր անասունների կերը:

Պարարտացնենք մեր հողերը գումաղբով, վորովհետեւ դա հարսուրյան աղբյուր է:



Յ Ա Ն Կ

1. Ինչու պեժք է պարարտացնել հողը:	3
2. Ինչ մեղքաւոր նյութերի կարիք ունեն բույսերը:	7
3. Ինչ նյութերից է բաղկացած գումաղբը, յեվ ինչ հասկություններ ունի նա:	10
4. Գումաղբի տեսակները:	14
5. Ինչպես պահենք գուր, վոր գումաղբի սննդատու նյութերը չկորչեն:	15
6. Վորտեղ պեժք է պահել գումաղբը:	18
7. Գումաղբը ինչպես պեժք է պահել աղբանոցում:	20
8. Գումաղբը դաժտ սանել:	22
9. Ինչ արդյունքներ է տալիս գումաղբով պարարտացրած հողը:	24

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԻ  
ԿԵՆՏՐ. ՇՐՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —

Մոսկվա, Նիկոլսկի ժող. № 10

Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

	Գ Ի Ն Ը
լեհերի ՊԱՏԳԱՄԵՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.
լեհերի ՊԱՏԳԱՄԵՆԵՐԸ ԺՈՂ.ՂՈՒՍ. ՄԱՍԻՆ. Կարմեց Ն. Կարապետյան	20 կ.
<del>Կարմեց Ն. Կարապետյան</del>	<del>1 ր. 25 կ.</del>
ԳՅՈՒՂԱՑԻՍԿԱՆ ՀԱՐՑ, Ի. Սաալին	50 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, Ի. Սաալին (264 էջ)	1 ր. 50 կ.
1905 թ. ՄԵՐ I ԲԱՆ. ԳՅՈՒՂ. Հեղափոխության շնորհիվ, Ի. Ֆլեբովսկի	70 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. Ելիզարով	30 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ, — Գ. Ռեզիկ	20 կ.
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905-ին, — Ա. Կարբեյանի	60 կ.
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՅՅԵԼ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԸ, — Զ. Լավրենս	30 կ.
ԿԼԱՐԱՍ. ՑԵՏԿԻՆ (Կենսագր.), Զ. Բոյարսկայա	15 կ.
ԲԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (Կոմս. Կմր.), Ըստ Վերգիլիանու, պրակ I,	50 կ.
ԲԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " պրակ II,	50 կ.
ԲԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " պրակ III,	50 կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, — Գ. Ազոլ	35 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋ. և ԶԱՐԳ. ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ, Մ. Գրեմյացկի	50 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ՍԱՐՔԱՍՏ ՏԻՅԵԶԵՐՔԸ, Ակադեմիկոս Գ. Գրեմյացկի	50 կ.
ՎՈՐՈՑ, ԿԱՅԾԱԿ և ԵԼԻՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Մ. Գրեմյացկի	40 կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՒՆԵՐԸ, — Բ. Սեմեյկին	40 կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԴՇԱՄՄԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԵՆԵՐԸ.	15 կ.
ՄԱՐԴԱՅԻՆ ԲԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. Յարվեցկի	15 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԳՅՈՒՂ. ԵԼԻՔՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՅԿԱՅԵՆԸ	20 կ.

ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. Դմիտրիևի	15 կ.
ԳԵՂ ԿԱՆԳԵՆ—ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ (Կոնպերացիան գյուղում), Լ. Ի.	30 կ.
ԱՍՏՄՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, — Ի. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱՑԻՍԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅՔՈՒԲԵՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ, — Պ. Վլասով,	40 կ.
ԳՈՄԱՂԲԸ, — Ի. Տեր-Ներսիսյան	20 կ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ, — Մ. Լիվինսկի	20 կ.
ԱՌԱՋԻՆ ՈՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԻ ԿԵՆԴԱՆՈՒՆ, — Ա. Սկոբոլով	17 կ.
ԸՆՏՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱՐՆԱՌԱՏ ԿՈՎ, — Բ. Սկոբոլով	17 կ.
ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱՐՆԱՌԱՏ ԿՈՎ, — Բ. Սկոբոլով	12 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՊԵՑ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ ԾՆԻ.	15 կ.
ԽՈՉԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, — Լիվինսկի	18 կ.
ՄՈՐ ԱՅՔԵՆԱՐԱՆԸ, — Գ. Սպերանսկի	16 կ.
ՅԵՐԵՄԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, — Բ. Գինսբուրգ	30 կ.
ԲՈՍ, և ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱ ԴԵՄ, — Բ. Նադեժդին	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱՆՏԵՐ, — Վ. Բրոննեբ	25 կ.
ԹՈՒՄԱՆ, — Ն. Սեմաշկո	25 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ և ԴՊՐՈՅԸ, — Ն. Տյուբյակով	40 կ.
ԳՅՈՒՂԱՑ. ՊԱՆՏՆՉՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՊՐՈՅԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ	12 կ.
ԳԵՂԱԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵՄԱՆԵՐԸ	25 կ.
ՀԱՄԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ Ի ԱՍՏԻՉ. ԴՊՐՈՅՈՒՄ, Բ. Ժավոլսկով	65 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՆԵՐ (ժողովածու)	60 կ.
ՊԻՆԵՐ, ՊԱՆՏՆԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԻ, — Յե. Ռադին	10 կ.
ՊԻՆԵՐ. ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄԵՆԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԻՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ, — Ն. Ֆայլիներ, մաս I,	40 կ.
ԼԻՆԻՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ " մաս II,	45 կ.
ՄԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԱՑՐԵՐԸ—ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ—Կրավչենկո	35 կ.
ԿԱՐՄԱՐԱՐՈՒՆԵՐԸ, — Պ. Խլեբնիկով	45 կ.
ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ, — Ա. Կուպրին	18 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՋԱԿ, — Պ. Ուլովսկի	28 կ.

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊՈՂԻՍՆՈՎ, — Պ. Ուրլադեց	22 կ.
ՄՈՐՄԱԿԻ և ԱՐՋԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ) — Գ. Մամբն-Սիբեյրյակ	15 կ.
ԻՆՉՊ. ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ և ԻՆՉ ԱՐԵՑ ԱՐՃԻՃԵ ՉԻՆՎՈՐԸ	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ, — Ֆր. Ֆոկս	18 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ, — Եղմանդո Դամիչիս	12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ, — Ուլգա	12 կ.
ԹՈՉՈՒՆՆԵՐ (գունատիպ ալլբոմ յերեխաների համար)	25 կ.
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ: ՄԱՐԴԸ, — Մաքսիմ Գորկիյ	15 կ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, — Ա. Սերաֆիմովիչ	45 կ.
ԸՆԿԵՐԸ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, — Մաքսիմ Գորկիյ	20 կ.
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ, — Մաքսիմ Գորկիյ	40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ  
Հ Ա Մ Ա Ր

ՀՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. (բ) ՀԱՄԱՌՈՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (10 մամուլ)  
 ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՄ (քրիսթոմատիա, 15 մամուլ)  
 ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԳԻՐԲ (10 մամուլ)  
 ՊՍՀՄ ՅԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ  
 ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ  
 ՀՂԿՅԵՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ  
 ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐ  
 ՌԱԴԻՈ

ՅԵՎ ՈՒՐԻՇ ԳՐՔԵՐ, վերոնց թվում 15 անուն մանկա-  
 կան (նկարազարդ), և 30 անուն զեղարվեստական (հայ  
 և ռուս նորագույն զրոզներից):

«Ազգային գրադարան»



NL0287508

17506